Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 3.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2024թ. Նոյեմբերի 22

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար՝ խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Տաթևիկ Նալբանդյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարարակական կազմակերպություն
Գրիգորի Հովհաննիսյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Վարդուհի Դադունց	«Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամ
Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպություն
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն
Հունան Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարարական կազմակերպություն

Նվարդ Փիլիպոսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Աննա Աղվանյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Անահիտ Պապիկյան	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ
Մարգարիտա Տեր-Հովհաննիսյան	Երեխաների պաշտպանության կենտրոն հիմնադրամ
Տաթևիկ Կարապետյան	ֆիզիկական անձ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Դավիթ Խաչատրյան	ԱՍՀ նախարարի տեղակալ
Տաթևիկ Ստեփանյան	ԱՍՀ նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	ԱՍՀ նախարարի տեղակալ
Սամվել Մուրադյան	ԱՍՀ նախարարության գլխավոր քարտուղար
Զարուհի Մանուչարյան	ԱՍՀ նախարարի մամուլի քարտուղար

Օրակարգի նախագծում ընդգրկված էր հետևյալ հարցը.

1. ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040թթ. ռազմավարություն (Ներկայացնող՝ Նախագահ, զեկուցող՝ նախարարի տեղակալ Դ.Խաչատրյան)

Խորհրդի Նախագահը ողջունեց Խորհրդի անդամներին և համառոտ ներկայացրեց ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040թթ. ռազմավարության հիմնական նպատակները և ակնկալվող արդյունքները: Կարևորելով ժողովրդագրության ռազմավարության մշակման գործընթացը՝ նշեց որ այն տևել է ավելի քան երկուսուկես տարի, որում ներգրավված են եղել աշխարհի մի շարք առաջատար հետազոտական կենտրոններ: Նախարարի խոսքով՝ համաշխարհային ուսումնասիրություններն ու միտումները ցույց են տալիս, որ ժողովրդագրության ոլորտում առկա մարտահրավերները վերաբերում են ոչ միայն ծնունդների ցածր աճին, այլ նաև բնակչության կառուցվածքին, այդ թվում՝ սեռատարիքային կազմի միտումներին, մարդկային կապիտալի զարգացման վրա դրանց ունեցած ազդեցությանը և այլն: Այս համատեքստում Խորհրդի Նախագահն ընդգծեց տվյալ մարտահրավերների կանխարգելման ուղղությամբ նախատեսվող աշխատանքների կարևորությունը՝ նշելով, որ ռազմավարական փաստաթղթով նախատեսված միջոցառումները կիրականացվեն չորս հիմնական ուղղություններով՝

1. ընտանիքի բարեկեցությունը խթանող միջավայրի ստեղծում,
2. մահվան ռիսկի գործոնների նվազեցում և առողջ միջավայրի խթանում,
3. ակտիվ, առողջ և արժանապատիվ ծերության պայմանների ապահովում,
4. էմիգրացիայի հանգեցնող դրդապատճառների նվազեցում և բարձր որակավորում ունեցող մարդկային կապիտալի զարգացում:

Հավելեց նաև, որ ժողովրդագրության ռազմավարությամբ սահմանված նպատակների իրականացման համար մշակվել է ավելի քան 190 միջոցառում, որոնք նախատեսվում է իրականացնել մինչև 2040 թվականը: Ավելին, փաստաթղթով նաև հոլիստիկ մոտեցում է ցուցաբերվում ընտանիքի, երեխայի խնամքի և կանանց աշխատանքային ներգրավվածության նկատմամբ, ինչը հնարավորություն կընձեռնի ապահովել ծնելիության աճ և մարդկային կապիտալի զարգացում:

Անցնելով օրակարգի հարցին, նախարարի տեղակալ Դ. Խաչատրյանը մանրամասն ներկայացրեց ժողովրդագրության ոլորտում սահմանված առաջնահերթություններն ու այդ ուղղությամբ նախատեսվող աշխատանքները: Նախարարի տեղակալը խոսեց նաև ժողովրդագրության ոլորտի ներկայիս իրավիճակի, հիմնական ազդեցությունների, ռազմավարական ծրագրերի և այլնի մասին:

Այնուհետև նիստի մասնակիցները բարձրացրին մի շարք հարցեր՝ ինչպես ժողովրդագրության ռազմավարության, այնպես էլ մի շարք այլ թեմաներով, մասնավորապես՝ պատերազմի ժամանակ վիրավորում ստացած անձանց անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքում հաշմանդամության խմբից զրկելու պատճառով անվճար բուժօգնությունից չօգտվելու, ռազմավարական փաստաթղթերի մշակման գործընթացում մասնավոր հատվածի հետ ներառականության ապահովման և այլ թեմաներով:

Հնչեցված՝ պատերազմի ընթացքում վիրավորում ստացած անձանց անվճար բուժօգնություն տրամադրելու հարցին ի պատասխան, Նախագահն առաջարկեց առաջիկայում կազմակերպել քննարկում տվյալ ոլորտը համակարգող Միասնական սոցիալական ծառայության պետի տեղակալի և «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի մասնակցությամբ՝ բարձրացված խնդիրը կարգավորելու նպատակով :

Հաջորդ՝ ռազմավարական փաստաթղթերը մշակելիս նախապես ՀԿ-ների հետ քննարկելու անհրաժեշտության մասին հարցին ի պատասխան՝ նախարարը նշեց, որ դրանք անընդհատ քննարկվող և փոփոխվող փաստաթղթեր են, որոնց վերաբերյալ շարունակական քննարկումներ կարող են լինել: Այս համատեքստում նույնպես նախագահի կողմից առաջարկվեց առաջիկայում կազմակերպել քննարկում նախարարի տեղակալ Ռ Սարգսյանի և ՀԿ-ների մասնակցությամբ:

Շարունակելով հարց ու պատասխանի ձևաչափով քննարկումը, խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց դիտարկումներն ու առաջարկները:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ.

1. **Նախարարի տեղակալ Ռ.Սարգսյանին՝** զբաղվածության ռազմավարությունը ներկայացնել ՀԿ-ներին և կազմակերպել քննարկում՝ մասնավորապես

ներառելով «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությանը:

ԺԱՄԿԵՏ՝ 3 օր

2. **Նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանին՝**

«Սատար» հաշմանդամների ՀԿ-ի կողմից ներկայացված անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացին վերաբերող դեպքը քննարկելու նպատակով կազմակերպել քննարկում ՄՍԾ պետի տեղակալ Արմեն Շուքուրյանի և «Սատար» հաշմանդամների ՀԿ-ի մասնակցությամբ:

ԺԱՄԿԵՏ՝3 օր

Նիստի ավարտին Նախագահը շնորհակալություն հայտնեց հասարակական խորհրդի անդամներին ներկայության և մասնակցության համար:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Արձանագրությունը կազմեց՝ Հ. Ներսիսյանը